

Ն ա մ ա կ Խ մ ք ա գ ռ ու ր ե ա ն *

Արարատի 1909 ամի դեկտեմբերի համարում տպուեցաւ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ձեմարանի տեսչի օգնական Մ. Ռոստոմեանի «Տեսութիւնը» ձեմարանին 1908/9 պարոցական ամի:

Այդ տեղ մատենադարանի մասին առուած է. «Մատենադարանը մատնուած է եղել կտարեալ անխնամութեան: Թող, մաշուած պահարաններ, մաշուած ու պատառոտուած կաղամեր ու թղթեր, պակասաւոր հասարհեր, մեծ քանակութեամբ անհետացած գրքեր, դատաւորութեան ու ցուցակագրութեան բացակայութիւն.— մի աներեւակայելի քառս է պատկերացնում մատենադարանի ներկայ դրութիւնը: Միայն շուտափոյթ վերատաշութիւնը կարող է փրկել դրքերի այդ միժամանակ հարուստ շահմարանը» (**):

Չափազանց անորոշ, առածգական բառերով և վառ գոյներով է նկարագրուած այն մատենադարանի դրութիւնը, որ տեղ հենց այս պարոցական տարուայ սկզբից մինչև այսօր՝ մարտ ամիսը շաբաթը շորս անգամ կանոնաւոր կերպով և ցանկացած ժամանակը կարելի է եղել դրքեր տալ աշակերտութեան և միաբանութեան:

Եւ որովհետև այս երրորդ տարին է, որ նուստա է սոյն մատենադարանի մատենադարանապետ կոչում, ուստի անհրաժեշտ համարեցի մի քանի խօսք ասել, որպէս զի երեւոյ, թէ ես որքան պատասխանատու եմ այս խնդրի համար. թէև բնաւ չեմ էլ կարծում, որ պ. Մ. Ռոստոմեանը ինձ է ինկատի ունեցել, քանի որ ես նորան յայտնել եմ ամբողջ գործի ընթացքը: Խնդիրն այս դէպքում գուրոք դանուած հասարակութիւնն է, որ գործին անտեղեակ լինելով՝ կորող է թիւր կարծիք կազմել:

Երեք տարի առաջ ձեմարանին տեսուչ պ. Մ. Բերբերեանը մատենադարանի դուռը բանալով՝ ինձ յանձնեց, և երբ ես նորանից խնդրեցի տալ ինձ հաշուով, նա պատասխանեց, «Ինչ-

պէս առանց հաշուի ոտացել եմ, այնպէս էլ ձեզ եմ յանձնում և վստահ եմ ձեզ վերայ, որ դուք կարգի կը բերէք»:

Երկար որոնելուց յետոյ ես դտայ տոմսակներ և մատենաներ: Անմիջապէս նամակներով դիմեցի ներկոյ և բացահայտ անձինքների և խնդրեցի գրքերը վերադարձնել: Երևաց, որ սմանք վերադարձրել են, բայց մատենաներում ջնջուած չեն անունները, ոմանք էլ գրքեր վերադարձրին, որ նշանակուած չէին մատենաներում և համ խոստացան վերադարձնել, բայց ցարդ չեն վերադարձրել:

Շուտով Բերրէրեան ինձ յանձնեց միայն գրքերի ցուցակագրութիւնը և պատուիրեց սրիշ բանի շխառնուել, իսկ գրքերը բաժանելը յանձնեց հանգուցեալ Մնացականեանին: Ես հետզհետէ կազմեցի հայերէն գրքերի ցուցակը, որ ամենից աւելի խառն էր, երկու կարգ տոմսակներով, ըստ համարի և ըստ հեղինակների, որ ցարդ կայ և շարունակուած է նոյն ձևով: Այնպէս որ եթէ այս միջոցին գրքերի կորուստ եղել է, ես չեմ կարող պատասխանատու համարուել: Այսքանը միայն կարող եմ հաւատարմութիւն անել, որ գրքերի կորուստ եղել է: Դեռ չորս տարի առաջ մի աշակերտի մօտ դանուեց 28 գիրք: Սակայն բոլոր կորուստները չէ կարելի միայն գողութեամբ բացատրել, այլ և այնու, որ մեր մատենադարանում սովորութիւն չի եղել գործածութիւնից փչացած գրքերի կամ կորցրած, բայց ացփէքը ոտացուած գրքերի՝ ինչպէս և այլ դէպքերում մատենադարանից վերցրած գրքերի համար արձանագրութիւն պահել, և եղել են տեսուչներ, որ իրանք ղլացել են այդ անելու:

Բոլոր ծաղած և ծաղելիք անպատեհութեանց առաջն առնելու և մատենադարանը կանոնաւոր պահելու համար՝ բաւական չէ միայն վերստուգութիւնը, — որի համար ես հենց այս տարուայ սկզբից քանիցս խնդրեցի Ռոստոմեանից, և որ տակաւին անգի չունեցու, այլ մի հառապաւն կարգ պարտաւորիչ ամենքի համար և անկախ պատասխանատու մարմին: Մատենադարանապետը պէտք է ունենայ գոնեա մի քարտուղար կամ օգնական գրքերի շարունակ ցուցակագրութեան, փչացած մատենաներն արտագրելու ևլն. ևլն. համար և մի դրագէտ ծառայ Ապա թէ ոչ միշտ ստիպուած պիտի լինի աշակերտների օգնութեան դիմել, ինչպէս ցարդ եղել է, երբ հին գրքերի ցուցակագրութիւնը մնում է չաւարտուած և կարելի է լինում միայն գրքերը բաժանել ու յետ ստանալ և հետզհետէ ստացուած նոր գրքերը մատենան մտցնել. որով ի հարկէ գործը չի կանոնաւորուի այն մատենադարանում, ուր տեղ էլ չկայ:

Իմ պատասխանը միայն ընդդժուած բառերի մասին է, որոնց համար կարող էի իբրև այժմեան մատենագործնապետ այնպէս կամ այնպէս պատասխանատու համարուել, մնացեալներն ինձ չեն վերաբերում և զլիսաւորապէս զրամի պակասութեանց արգիւնք են:

Ս. Է. Հ. Ն. Ուսուցիչ եւ մատենադարանապետ

Սեփան Կանայեանց

12-ն մարտի 1910

Վաղարշապատ.

Կարեւոր լուրեր.

«Մշակը» հաղորդում է. որ մայիսի առաջին շաբթին (ն. տ.) իւրերիցում 42 տարեկան հասակում վախճանուել է սրտի հիւանդութիւնից հայադէտ Փրանց Նիկողոսա Ֆինկը:

Երա հայագիտական աշխատութիւններից նշանուորն՝ են 1. Արգար Յովհաննիսեանի հայերէն ձեռագրերի ցուցակը, 2. Տիւրինգէնի համալսարանի ձեռագրերի ցուցակը Լ. Գեանջեցեանի հետ, 3. Lehrbuch der Neu—ostarmenischen sprache, Ս. Կանայեանի հետ միասին, 4. «Հանդէս հայագիտութեան» կարճ կեանք ունեցող հրատարակութիւնը Լ. Գեանջեցեանի հետ միասին, 5. Հայոց գրականութեան մասին համառոտ ուրուագծեր «Literaturen der Ostens» և «Kultur der Gegen Nari» ժողովածուների մէջ:

5. Ս. Էջմիածնի տպարանում հրատարակել է 1902 թուին «Նեղոսի Դրքստապատի կարգադրութիւն պատրիարքական աթոռոյն» հայերէն և յունարէն: Հայերէն բնագրի հիմք են Մայր Աթոռի Մատենադարանի երկը ձեռագրերը, որոնց մասին տեղեկութիւն է տալիս հանդ. Ֆ. Հ. Ֆինկը: